

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽՕՐԻՆԱԿԸ*

5. ԽՈՒՍԱՓՈՒՄ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՆՕՐԻՆԱՉԱՓ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Սաղմոսների հայերեն թարգմանությունը սովորաբար խուսափում է կրկնություններից: Երբ հունարենում և մյուս բնագրերում միևնույն բառը գործածվում է մոտիկ հարևանությամբ, ապա հայը դրանցից մեկը ճնարավորության դեպքում բաց է թողնում: Այսպես.

Լ 13—14. Ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ. ի նմա է **պատրաստեալ** զանօթս մահու:

Մյուս բնագրերը ունեն՝ «...զաղեղն իւր լարեալ և **պատրաստեալ**. ի նմա է **պատրաստեալ...**» (=τὸ τόξον αὐτοῦ ἐνέτεινεν καὶ ἡτοίμασεν αὐτο. καὶ ἐν αὐτῷ ἡτοίμασεν...):

ԺԲ 4—5. Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից ի մահ. մի ասասցէ թշնամին իմ թէ յաղթեցի նմա:

Մյուս բնագրերը՝ «...մի **երբէք** ննջեցից... մի **երբէք** ասասցէ...» (=μήποτε ὑπνώσω... μήποτε εἴπῃ):

Ի 9. Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գտցէ **զամենայն** ատելիս քո:

Մյուս բնագրերը՝ «...ի վերայ **ամենայն** թշնամեաց քոց... **զամենայն** ատելիս քո» (=πᾶσιν τοῖς ἐχθροῖς σου πάντας τοὺς μισοῦντάς σε):

Կրկնվող **ամենայն** բառերից մեկը բաց է թողնված նաև Ե 7 և ՃԺԸ 128 համարներում:

ԼԲ 16. Ոչ թէ ի բազում զօրս իւր **ապրեսցի** թագաւոր, և ոչ սկայ ի բազում զօրութեան իւրում:

Մյուս բնագրերը՝ «ոչ թէ... **ապրեսցի** թագաւոր, և ոչ սկայ **ապրեսցի...**» (=οὐ σῴζεται βασιλεὺς ... καὶ γίγας οὐ σωθήσεται).

ԼԶ 1. Մի **նախանձիր** ընդ չարս, մի ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն:

Մյուս բնագրերը «մի **նախանձիր** ընդ չարս, և մի **նախանձիր** ընդ այնոսիկ...» (=μὴ παραζήλου ἐν πονερευομένοις μηδὲ ζήλου τοὺς...):

Կարելի է նշել նաև նման այլ օրինակներ:

Սակայն ավելի հաճախ են այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը բաց է թողնում նախօրինակի կրկնվող ստացական դերանունները: Սեմական լեզուների համար համադաս հատկացյալների դեպքում ստացական հոդի (կցական դերանվան) կրկնությունը պարտադիր է, այլապես երկրորդ բառը կկորցնի հատկացելությունը: Սրան նման է հայերեն ստացական հոդի գործածությունը. ասվում է՝ «մայրս և քույրս», բայց ոչ երբեք՝ «մայրս և քույր (կամ քույրը)»: Սակայն երբ կան ստացական դերանուններ, ապա համադաս հատկացյալներին կարող է միայն մեկ դերանունն էլ բավարարել, օրինակ, «իմ մայրը, քույրը, եղբայրը, հայրը և այն»: Սեմական լեզուները ստացական դերանուններ չունեն, այդ պատճառով այնտեղ նման դեպքերում հոդերը (կցական դերանունները) կրկնվում են: Այդ կրկնությունները հույն թարգմանիչները ստրկորեն պահպանել են, ավելորդ կերպով ծանրաբեռնելով բնագիրը: Իսկ հայերեն թարգմանությունը հաճախ դրանցից հմտորեն կարողացել է ազատվել: Այսպես, հայերեն թարգմանությունն ունի.

ԻԲ 4. ցուպ **քո** և գաւազան (**փխ** ցուպ **քո** և գաւազան **քո**):

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № Ա-ից:

ԻԴ 10. զուխտ և զվկայութիւն **նորա** (**փխ** զուիստ **նորա** և զվկայութիւն **նորա**):

ԽԳ 24. զաղքատութիւն և զնեղութիւն **մեր** (**փխ** զաղքատութիւն **մեր** և զնեղութիւն **մեր**):

ԾԶ 4. զողորմութիւն և զճշմարտութիւն **իւր** (**փխ** զողորմութիւն **իւր** և զճշմարտութիւն **իւր**):

ՃԵ 37. զուստերս և զդստերս **իւրեանց** (**փխ** զուստերս **իւրեանց** և զդստերս **իւրեանց**)[34]:

Հմմտ. նաև ԼԹ 18, ԽԲ 3, ԾԹ 9, ԿԵ 10, ՀԷ 4, 43, ՁԸ 27, ՂԹ 3, ՃԴ 5, 33, ՃԺԸ 168, ՃԻ 8, ՃԻԱ 8, ՃԽԱ 6:

Սրանց կողքին կան դեպքեր, երբ հայերեն թարգմանությունը պահպանում է կրկնվող ստացական դերանունները, հատկապես երբ դա ոճի տեսակետից արդարացված է: Օրինակ.

Գ 4. Այլ դու Տէր, օգնական **իմ** ես, փառք **իմ** և բարձրացուցիչ գլխոյ **իմոյ**:

ԺԷ 2. Տէր հաստատիչ **իմ**, ապաւէն **իմ** և փրկիչ **իմ**:

ՃԽԳ 2. Ողորմութիւն **իմ** և ապաւէն **իմ**, օգնական **իմ** և փրկիչ **իմ**, ապաւէն **իմ**:

Հմմտ. նաև՝ Ե 3, ԺԸ 5, ԻԵ 2, ԻԶ 10, ԻԷ 7, Լ 4, 10, ԼԴ 23, ԼԷ 12, ԼԹ 11, ԽԲ 3, ԽԳ 4, 5, ԾԴ 14, ԿԱ 3, 7, Հ 3, ՀԲ 26, ՁԳ 3, 4, ՁԸ 25, ՃԺԷ 14, ՃԽԴ 1:

Ստացական դերանունների նման, հայերեն թարգմանությունը երբեմն սղում է նաև կրկնվող ուղիղ խնդիր անձնական դերանունները. Այսպես.

ԺԱ 8. պահեսցես **զմեզ** և ապրեցուսցես (**փխ** պահեսցես **զմեզ** և ապրեցուսցես **զմեզ**):

ԻԷ 9. հովուեա և բարձրացո **զնոսա** (**փխ** հովուեա **զնոսա** և բարձրացո **զնոսա**):

ԼԴ 16. փորձեցին **զիս** և արհամարհեցին (**փխ** փորձեցին **զիս** և արհամարհեցին **զիս**):

Հմմտ. նաև՝ ԻԷ 5, ԼԱ 8, Խ 3, ՃԺԷ 18, ՃԺԸ 73, ՃԽԳ 10:

Ձեռագրական տվյալները ցույց են տալիս, որ կրկնվող դերանունների բացթողման գործում իրենց լման են ներդրել գրիչները: Կան դեպքեր, երբ սաղմոսների հայերեն թարգմանության ընդօրինակություններից ոմանք պարունակում են կրկնվող, մյուսները՝ սղված ձևեր: Օրինակ, Թ 5 համարի «զդատաստանս **իմ** և զիրաւունս **իմ**» արտահայտության փոխարեն որոշ ձեռագրեր ունեն՝ «զդատաստանս **իմ** և զիրաւունս», կամ Հ 18 «զզօրութիւնս **քո** և զարդարութիւնս **քո**»-ի փոխարեն՝ «զզօրութիւնս **քո** և զարդարութիւն» և այլն: Այնպես որ հետագայում, ավելի շատ ձեռագրերի համեմատությունը գուցե կարող է պարզել, որ նաև վերը նշված բացթողումներից մի քանիսը կատարվել են գրիչների կողմից:

Բացի կրկնվող բառերից մեկի բացթողումից, սաղմոսների հայերեն թարգմանությունը գիտե նաև կրկնությունից խուսափելու մի այլ միջոց՝ հոմանիշային պեսպիսությունը: Այսինքն, նախօրինակի կրկնվող բառերը թարգմանության մեջ երբեմն վերարտադրվում են իրենց հոմանիշներով: Այսպես.

ԼԲ 10. **Անարգէ** Տէր զիսորհուրդս ժողովրդոց, և **արհամարհէ** Տէր զիսորհուրդս իշխանաց:

Մյուս բնագրերի միևնույն **անարգէ** (ἀθετεῖ) բառը թարգմանվել է **անարգէ** և **արհամարհէ**:

Նույն ձևով ԻԸ 8 համարում մյուս բնագրերի կրկնվող **շարժէ** (συσσείοντος. . . συσσείσει) բառը հայերենում դարձել է **շարժէ** և **խռովեցուցանէ**, ԿԷ 3, 9 համարներում **յերեսաց** (ἀπὸ προσώπου) բառը՝ **յերեսաց** և **առաջի**, ԿԹ 2 համարում **յօգնել** (τὴν βοήθειαν... τὸ βοηθῆσαι) բառը՝ **յօգնել** և **յընկերել**, ՃԴ 35-ում **եկեր** (κατέφαγεν) բառը՝ **եկեր** և **սպառեաց**[35]:

Ավելի պերճախոս են հետևյալ երկու դեպքերը, երբ մյուս բնագրերում երեք անգամ իրար մոտ կրկնվող միևնույն բառը հայերեն թարգմանության մեջ արտահայտվել է երեք տարբեր հոմանիշներով:

ՃԺԳ 9—11. Տուն Իսրայելի յուսացաւ ի Տէր, օգնական **ընդունելի** է նոցա: Տուն Ահարոնի յուսացաւ ի Տէր, օգնական **ընկերելի** է նոցա: Երկիւղածք Տեառն յուսացան ի Տէր, օգնական և **փրկիչ** է նոցա:

Ընդգծված բառերի փոխարեն մյուս բնագրերը միշտ ունեն **վահան** (ὑπερασπιστής):

ՃԺԷ 10—12. Ամենայն ազգքն շրջեցան զինն, և անուամբ Տեառն **յաղթեցի** նոցա: Շրջելով շրջեցան զինն, պաշարեցին զիս ի միասին. և անուամբ Տեառն **վանեցի** զնոսա: Շրջեցան զինն որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր, և անուամբ Տեառն **մերժեցի** զնոսա:

Այստեղ էլ ընդգծված բառերին մյուս բնագրերում համապատասխանում է միայն մեկը՝ **վանեցի** (ἠμυνάμην):

Հետաքրքիր է, որ սաղմոսների հայերեն թարգմանության մեջ լայն դրսևորում չի գտել ոսկեդարյան հայ գրականությանը անչափ բնորոշ ոճական ավելադրության երևույթը: Սա կարելի է բացատրել այն բանով, որ թարգմանիչները ձգտել են ճշտորեն վերարտադրել սկզբնագիրը, և նրանով, որ ավելադրությունն էլ համարվել է կրկնության տարատեսակներից մեկը: Վկայված է ավելադրության ավելի քան մեկ տասնյակ դեպք. **պատեալ պահեալ պաշարէին զիս** փխ συνεπιθεμένων μοι (Գ 7). **կայ և մնայ** փխ μένει (Թ 8, կ 8, ՀԱ 5, ՃԱ 27)[36], **սրբեալ և պարզեալ** փխ κεκαθαρισμένον (ԺԱ 7), **ահ և երկեղ** փխ φό-

[34] Հատկանշական է, որ կրկնվող դերանվանական հատկացուցիչների ավելորդությունը երբեմն զգում են նաև մյուս բնագրերի խմբագիրները. հմմտ. Rahlfs, ԾԸ 5, ՃԺԸ 114, ՃԼԷ 2 և այլն:

[35] ԿԷ 3—4 և ՁԱ 1 համարներում հայերեն թարգմանությունը մյուս բնագրերի **Աստուած** բառի կրկնությունը վերարտադրել է համապատասխան դերանուններով. «Կորիցեն մեղաւորք յերեսաց **Աստուծոյ**. արդարք ուրախ եղիցին, ցնծասցեն առաջի **նորա**» և «Աստուած եկաց ի ժողովս **աստուածոց** և ի միջի **նոցա** դատէր զնոսա»:

[36] ՃԺԸ 90 համարում **կայ և մնայ** փխ **և կայ** ճիշտ ընթերցվածի, ունեն Զոհրապյանի ձեռագրերից ոմանք:

[illegible] (Լ, 12), **կար զօրութեան** փխ [illegible] (ԼԸ 6, 8), **այպն կատականաց** փխ [illegible] **կամ** [illegible] (ԽԴ 14, ՀԸ 4, ՀԹ 7), **ցնծասցէ ցնծութեամբ** փխ [illegible] (ԽԼ 3), **բայց սակայն** փխ [illegible] (ԽԸ 16), **պատարագ ուխտից** փխ [illegible] (ԽԹ, 5), **կան և ունին** փխ [illegible] (ՀԲ 12), **սատակեցան պակասեցան կորեան** փխ [illegible] (ՀԲ 19), **խնդրելով խնդրեսցեն** փխ [illegible] (ՀԼ 7), **վառեցան բորբոքեցան** փխ [illegible] (ՃԺԼ 12)[37]:

Այնուամենայնիվ միշտ չէ, որ հայերեն թարգմանությունը կարողանում է վերացնել կրկնությունները: Ավելին, երբեմն ի տարբերություն մյուս բնագրերի, նույնիսկ ինքն է ընկնում դրանց մեջ: Այսպես, չկարողանալով պատշաճ կերպով տարբերակել հունարեն [illegible] և [illegible] բառերը, հայերեն թարգմանությունը ԼԲ 10—11 համարներում ստիպված հինգ անգամ կրկնել է **խորհուրդ** բառը. «Տէր ցրուէ **զխորհուրդս** հեթանոսաց, անարգէ Տէր **զխորհուրդս** ժողովրդոց, և արհամարհէ Տէր **զխորհուրդս** իշխանաց: **Խորհուրդ** Տեառն յաւիտեան մնայ, **խորհուրդ** սրտի նորա ազգէ մինչև յազգ»: Նույն բանը գտնում ենք նաև ՃԵ 27 համարում, որի [illegible] տարբեր բառերը թարգմանված են **«ցրուեսցի... ցրուեսցի»**: Ըստ երևույթին, ոճի տեսակետից արդարացված պետք է համարել ՃԽԸ 10 համարում հայերեն թարգմանության մեջ **ամենայն** բառի հավելումը՝ «Վերինք և ամենայն բլուրք, ծառք պտղաբերք և **ամենայն** մայրք, գազանք և ամենայն անասունք, սողունք և **ամենայն** թռչունք թեւաւորք»:

Երբեմն կրկնությունից խուսափելու սկզբունքը հայերեն թարգմանության մեջ խախտվում է նաև **Տէր** բառի գործածության դեպքում: ԼԲ 10 համարից վերը բերված քաղվածքում արդեն տեսանք, որ **Տէր** բառը մոտիկ հարևանությամբ կրկնված է երեք անգամ, չնայած կարելի էր բավարարվել միայն մեկով, ինչպես, օրինակ, Յոթանասնից բնագրում[38]: ԼԳ 7 համարում մյուս բնագրերի «Այս աղքատ կարդաց, և **Տէր** լուաւ սմա» նախադասության փոխարեն հայերեն թարգմանությունն ունի՝ «Այս աղքատ կարդաց **առ Տէր**, և **Տէր** լուաւ սմա», կամ ԼԳ 18-ում՝ «Կարդացին արդարք, և **Տէր** լուաւ նոցա» նախադասության դիմաց՝ «Կարդացին արդարք **առ Տէր**, և **Տէր** լուաւ նոցա»: Եվ ընդհանրապես հայերեն թարգմանությունն ազատ է վարվում այս բառի հետ: Զգալի թիվ են կազմում նրա գործածության հավելյալ դեպքերը մյուս բնագրերի համեմատ. տես ԺԲ 4, 6, ԺԶ 6, ԺԷ 18, 20, 44, ԺԹ 3, ԻԲ 4, 6, Լ 17, ԼԱ 3, 10, ԼԵ 10, ԽԲ 3, Ծ 6, 8, Կ 2, ԿԸ 4, Հ 9, ՀԱ 16, ՀԵ 4, ՀԹ 19, ՁԹ 16, 17, ՂԷ 9, ՃԲ 7, 9, ՃԵ 23, ՃԺԳ 12, 12, ՃԺԸ 25, 123, ՃԽ 2, ՃԽԱ 4, 7, 8, ՃԽԴ 19, ՃԽԵ 9, ՃԽԷ 20, ՃԽԸ 13: Երբեմն հայերեն թարգմանության մեջ **Տէր** բառը փոխարինում է մյուս բնագրերի անձնական դերանուններին և հակառակը, օրինակ, ԼԲ 3-ում՝ «Օրհնեցէք **զՏէր**» փխ «Օրհնեցէք **զնա**». տես նաև՝ Բ 13, ԼԳ 6, ԾԵ 4, ՁԳ 3, 5, ՁԸ 7, ՂԹ 4, ՃԽԱ 3, ՃԽԸ 14: Հազվագյուտ չեն նաև այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը բաց է թողնում մյուս բնագրերի **Տէր** բառը. տես Դ 7, ԺԷ 50, ԻԵ 12, ԼՁ 18, ՀԹ 20, ՁԵ 11, ՂԶ 9, ՃԱ 16: Հասկանալի է, որ այստեղ նշված են միայն այն դեպքերը, երբ մյուս բնագրերից շեղվում են Զոհրապյանի բոլոր ձեռագրերը: Տողատակի տարընթերցվածներում **Տէր** բառի գործածությունը անհամեմատ ավելի ազատ է:

Հայերեն թարգմանության մեջ հազվադեպ չեն նաև **ամենայն** բառի հավելումները: Վերը նշեցինք, որ ՃԽԸ 10 համարում այդ բանը արդարացված է հարևան նախադասությունների ոճական զուգահեռականությամբ (սողունք և **ամենայն** թռչունք): Իսկ նախորդ դրվագում տեսանք, որ ԺԳ 2, ԽԴ 3, ԾԲ 3, ԽԹ 10, ՁԲ 8 և ՁԹ 2 համարներում հայերեն թարգմանությունը **ամենայն** բառը ավելացրել է նմանակությամբ: Ավելի սովորական են այս բառի այն հավելումները, որոնք կատարվել են, ըստ երևույթին, նախադասությունների բովանդակության սատկացման նպատակով, սակայն պարզ չէ՝ թարգմանչի, թե՞ գրիչների կողմից: Այսպես Բ 8 համարում հայերեն թարգմանությունն ունի «տաց... իշխանութիւն քեզ **զամենայն** ծագս երկրի», մինչդեռ մյուս բնագրերում ընդգծված բառը բացակայում է: ԼԱ 1 համարում նույնպես, ի տարբերություն բոլոր մյուս բնագրերի, հայը տալիս է «և ծածկեցան **ամենայն** յանցանք նորա»: Տես նաև՝ Լ 12, ԽԹ 17, 21, ՀԱ 16, ՁԲ 9, ՂԵ 13, ՃԳ 29, ՃԺԸ 27, ՃԻԸ 8, ՃԽՁ 3, ՃԽԹ 7, ՃԾԱ 3: ՁԸ 42 և ՃԲ 3 համարներում, ընդհակառակն, հայերեն թարգմանությունը բաց է թողել մյուս բնագրերի **ամենայն** բառը[39]:

Այսպիսով, ինչպես կրկնությունից խուսափելու սկզբունքը, այնպես նաև **Տէր** և **ամենայն** բառերի գործածության առանձնահատկությունը արժանի են հատուկ ուշադրության սաղմոսների հայերեն թարգմանության և մյուս բնագրերի համեմատական ուսումնասիրման ժամանակ:

Հայերեն թարգմանությունն ունի նաև մի շարք տարբերություններ, որոնք այլևս այս և նախորդ դրվագներում շարադրված սկզբունքներով հնարավոր չէ բացատրել: Դրանց թվին են պատկանում նախ և առաջ բառերի անհարկի հավելումները: Իհարկե, յուրաքանչյուր որոշակի դեպքում կարելի է ինչ-որ բացատրություն գտնել, բայց ամբողջության մեջ այդ հավելումները ակնհայտ օրինաչափություն չեն դեր-

[37] Թեև սաղմոսների հայերեն թարգմանության մեջ հանդիպում են նաև ավելադրության մի շարք այլ դեպքեր, սակայն նրանք ոչ թե հայ թարգմանչի ստեղծածն են, այլ բառ առ բառ բխում են նախօրինակից. հմմտ. **ամաչեսցեն և յամօթ լիցին** (ԼԴ 4, 26), **համբերելով համբերի** (ԼԹ 2), **սրտմտութիւն բարկութեան** (ՀԷ 49), **շրջելով շրջեցան** (ՃԺԷ 11) և այլն:

[38] Պեշիտտան ունի առաջին երկու **Տէր**-ը:

[39] **Ամենայն** բառի բացթողման նկատված մյուս երեք դեպքերի մասին (Ի 9, Ե 7, ՃԺԸ 128) խոսվել է սույն դրվագի սկզբում:

սնվորում: Այսպես, օրինակ, ԻԳ 6 համարի «խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակովբայ» նախադասության ընդգծված բառը առկա է միայն սաղմոսների հայերեն թարգմանության մեջ: ԻԴ 17 համարում հայը ավելացրել է **յոյժ** (ձեղոթիւնք սրտի իմոյ բազում եղեն **յոյժ**), իսկ ՃԼԶ 7-ում՝ **հասուցէք** բառը (քակեցէք քակեցէք մինչև ի հիմն **հասուցէք**): Ինչպես տեսնում ենք, այսպիսի հավելումներով նախադասության միտքը ըստ էության չի փոխվում, այլ միայն որոշ նրբերանգ է ձեռք բերում: Մյուս բնագրերի համեմատ հավելյալ բառեր ունեն նաև սաղմոսների հայերեն թարգմանության հետևյալ համարները. ԻԷ 4 **հատո նոցա**. ԻԷ 5 **հայեցաւ**. ԼԶ 9 **վաղվաղակի**. ԽԱ 5 **քաջալերէի**. ԽԹ 2 **փրկութիւն**. ԽԹ 16 **բնաւ**. ԾԳ 1 **նստի**. ԾԶ 1 **թաքուցեալ**[40]. Կ 4 **եղեր** (2-րդ). ԿԲ 7 **կանխեալ**. ԿԷ 35 **երկնից**. ՀԷ 5 **միանգամ**. ՀԷ 48 **դատեցաւ**. Ճ 5 **բացէ ի բաց, հաց**. ՃԵ 40 **յոյժ**. ՃԺԲ 9 **ուրախամիտ**. ՃԺԸ 120 **յոյժ**. ՃԼԱ 14 **ասէ**. ՃՄԱ 1 **առաջի Ծաւուղի**: ԺԷ 1, ՃԼԹ 9 և ՃՄ 5 համարներում հայերեն թարգմանությունը ավելացրել է նույնիսկ ամբողջական բառակապակցություններ. «ի վերայ պատերազմող նահատակի», «խորհուրդք նոցա մի կատարեսցին» և «օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան»: Բառերի բացթողումը ավելի հազվադեպ է և կապված է, ըստ երևույթին, պատահականությունների հետ: Այսպես, հայերեն թարգմանության մեջ Բ 13 համարում բացակայում է մյուս բնագրերի **վաղվաղակի** (ἐν τάχει) բառը. ԼԲ 13-ում՝ **հոտս** (εἶδεν). ԼԴ 19-ում՝ **անարդար** (ἀδίκως). ԽԱ 5-ում՝ **ի տեղի** (ἐν τόπῳ). ԿԷ 29-ում և Հ 19-ում՝ **Աստուած** (ὁ θεός)[41]. ՀԲ 12-ում՝ **յաւիտեան** (εἰς τὸν αἰῶνα). ՀԳ 10-ում՝ **ի սպառ** εἰς τέλος). ՃԵ 23-ում՝ **ի խրամատի** (ἐν τῇ θραύσει) Նույնպես պատահականության արդյունք պետք է համարել թերևս նաև այն եզակի դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը մյուս բնագրերի որևէ բառի փոխարեն անբացատրելիորեն դնում է մի ուրիշ բառ. Է 4 **անօրէնութիւնք** փխ **անիրաւութիւն**. ԻԶ 1 **կեանք** փխ **փրկիչ**. Լ 7 **զերկիւղ ի սնոտիս** փխ **զսնոտիս ի տարապարտուց**. Լ 19 **զանիրաւութիւն** փխ **զանօրէնութիւն**. ԼԸ 12 **մեղաց** փխ **անօրէնութեան**. ԽԳ 25 **մէջք** փխ **փոր**. ՀԳ 14 **զօրացն** փխ **ժողովրդոց**. ՀԷ 10 **Տեառն** փխ **Աստուծոյ**. ՀԸ 6 **թագաւորաց** փխ **թագաւորութեանց**. ՃԼԵ 25 **կենդանեաց** փխ **մարմնոյ**. ՃԽԶ 7 **նմա** փխ **Աստուծոյ մերում**. ՃԽԸ 11 **զօրք իրեանց** փխ **ամենայն ժողովուրդք**: ԿԷ 34 համարում մի ամբողջ նախադասություն է փոխարինված մեկ ուրիշով. **ճանապարհ արարէք այնմիկ...** փխ **սաղմոս ասացէք Աստուծոյ...**:

Որոշակի սկզբունքի չեն հետևում նաև ազատ թարգմանության, այսինքն միևնույն մտքի այլակերպ արտահայտության վկայված դեպքերը, որոնք առանձնապես մեծ թիվ էլ չեն կազմում: Դրանք երբեմն արդյունք են թարգմանչի պերճախոսության, երբեմն ընդհակառակն՝ հակիրճության, իսկ երբեմն էլ այն բանի, որ բառացի թարգմանությունը կարող էր մթագնել նախադասության միտքը կամ պատճառ դառնալ երկիմաստության: Կարելի է բերել մի շարք հետաքրքիր օրինակներ.

ԺԷ 41. Զթշնամիս իմ հալածականս արարեր **փխ** և զթիկունս թշնամեաց իմոց ետուր ինձ: Նույնը տե՛ս նաև՝ Ի 13:

ԻԳ 8. Տէր հզօր զօրութեամբ իւրով **փխ** Տէր հզօր և զօրաւոր:

ԾԴ 9. Փրկէր զիս ի կարճմտութենէ զայրանալոյ, ի մրրկեալ ձեղսրտութենէ **փխ**... ի կարճմտութենէ և ի մրրկէ:

ԾԸ 4. Որսալ զանձն իմ կամեցան **փխ** զի արդ որսացին զանձն իմ:

ԿԳ 6. Խորհեցան թաքուցանել ինձ որոգայթ և ասացին ոչ տեսանէ զայս Տէր **փխ** ...և ասացին ո՞ տեսցէ զնոսա:

Հ 15. Որպէս ոչ թէ խարդախութիւն ինչ գիտէի ես դպրութեան **փխ** զի ոչ գիտէի ես զդպրութիւնս:

ՁԱ 2. Եւ ակն առնուք մեղաւորաց **փխ** և երես առնուք մեղաւորաց:

ՃԳ 8. Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան **փխ** ելանեն լերինք և իջանեն դաշտք:

ՃԵ 23. Մովսէս... կայր առաջի նորա, դարձաւ առ Տէր և անցոյց զբարկութիւն նորա **փխ** ...ի դարձուցանել բարկութեան նորա:

ՃԽԹ 6. Եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց **փխ** ...կոկորդով իւրեանց:

Առանձին դեպքերում հայերեն թարգմանությունը պարզապես փոխում է բառերի դասավորությունը, առանց ազդելու նախադասության մտքի վրա, օրինակ.

Թ 8. Պատրաստ արար զաթոռ իւր ի դատաստանի **փխ** պատրաստ արար ի դատաստանի զաթոռ իւր:

ԺԴ 3. Եւ չար ընկերի իւրում նա ոչ արար **փխ** և ոչ արար ընկերի իւրում չար:

ԺԷ 35. Եւ արարեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ **փխ** և արարեր որպէս զաղեղն հաստ զբազուկ իմ:

Ի 10. Եւ հուր կերիցէ զնոսա **փխ** և կերիցէ զնոսա հուր:

ԽԶ 2. Ծափս հարէք ամենայն հեթանոսք **փխ** ամենայն հեթանոսք ծափս հարէք:

ՃԴ 37. Եհան զնոսա ոսկւով և արծաթով **փխ** արծաթով և ոսկւով: Նույնը տես նաև ՃԺԴ 4, սակայն այստեղ հայերենի դասավորությունն ունի նաև սաղմոսների արաբերեն թարգմանությունը:

ՃԶ 13—14. Ի վշտաց նոցա եհան զնոսա, փրկեաց զնոսա ի խաւարէ **փխ** ...փրկեաց... եհան...:

---

[40] Կարելի է դիտել որպես ավելադրություն՝ «փախուցեալ թաքուցեալ»:

[41] Ըստ երևույթին, կրկնությունից խուսափելու համար. «Հրամայեա **Աստուած** զօրութեամբ քով. զօրացո (**Աստուած**) զայս զոր հաստատեցեր ի մեզ» և «Զզորութիւնս քո և զարդարութիւն (**Աստուած**) մինչեւ ի բարձունս, զոր արարեր մեծամեծս. **Աստուած** ո՞ նմանէ քեզ»:

Հազվադեպ են նաև նախադասության կառուցվածքի փոփոխությունները, այսպես.

Թ 16. Որոգայթ զոր թաքուցին առցէ զոտս նոցա **փխ** յորոգայթ զոր թաքուցին առան ոտք նոցա:

Թ 19. Ոչ ի սպառ մոռանայ Տէր զաղքատն **փխ** ոչ ի սպառ մոռասցի աղքատն:

ԽԳ 19. Եւ ոչ դարձաք յետս սրտիւք մերովք **փխ** և ոչ դարձան յետս սիրտք մեր:

Նշված և նման այլ օրինակներում թարգմանչական որոշակի միտում ենթադրելը, իհարկե, ավելորդ է, քանի որ այս կարգի փոփոխությունները ըստ էության որևէ նոր իմաստավորում չեն բերում: Սաղմոսների հայերեն բնագրում կարելի է նշել միտումնավոր թարգմանության միայն մի քանի դեպք: Այսպես, ԽԹ 18 համարում հայը, մեղմացնելով գոհիկաբանությունը, մյուս բնագրերի **պոռնկացող** (զանազան) բառի փոխարեն դրել է **շուն՝** «և ընդ շունս դնէիր բաժին քո»: Զորս անգամ հայերեն թարգմանությունը մյուս բնագրերի **աստուածք** (աստված) բառը դարձրել է **կուռք.** ՂԵ 4—մեծ է Տէր... անարկու է նա ի վերայ ամենայն **կռոց.** ՂԵ 5—ամենայն **կուռք** հեթանոսաց դևք են. ՂԶ 9—յոյժ բարձրացար ի վերայ ամենայն **կռոց.** ՃԼԴ 5—և Տէր մեծ է քան զամենայն **կուռս:** Ամենայն հավանականությամբ, թարգմանիչը **աստուածք** բառում միաստվածությանը հակատող հանգամանք է նկատել: Հետևյալ հատվածներում սակայն հայերեն թարգմանությունը պահպանել է սկզբնագրի **աստուածք** բառը. ԽԳ 21—ձգեալ իցէ զձեռս մեր **յաստուածս** օտարս. ԽԹ 1—Աստուած **աստուծոց** Տէր խօսեցաւ. ՁԱ 1—Աստուած եկաց ի ժողովս **աստուծոց.** ՁԱ 6—ես ասացի թէ **աստուածք** իցէք. ՁԳ 8—և երևեսցի Աստուած **աստուծոց** ի Սիովն. ՁԵ 8—ոչ ոք է նման քեզ **յաստուածս.** ՃԼԵ 2—խոստովան եղերուք Աստուծոյ **աստուծոց:** Այս դիրքերում պարզապես անհնար է **աստուածք** բառը փոխարինել **կուռք**-ով: Միտումնավոր թարգմանության հետաքրքիր օրինակ ենք գտնում նաև ՃԼԱ 10 համարում: «Վասն Դաւթի **սիրելոյ** քո, մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ»: Մյուս բնագրերը ընդգծված բառի փոխարեն ունեն **ծառայի** (ծառան), ուստի գրչական շփոթումը կամ թարգմանական թյուրիմացությունը այստեղ բացառված պետք է համարել: Ծեղման պատճառը թերևս այն է, որ թարգմանչին կամ հետագա խմբագիրներին հայտնի է եղել, որ երբայական **Դաւիթ** անունը նշանակում է **սիրելի**[42]: ԿԷ 32. ՀԱ 9. ՀԳ 14 և ՁԶ 4 համարներում հայերեն թարգմանությունը մյուս բնագրերի **եթովպացի** (Ethiopia) բառի դիմաց դրել է **հնդիկ**[43], որը բխում է ըստ երևույթին այն հանգամանքից, որ Աստվածաշնչի մյուս գրքերում **հնդիկ** և **եթովպացի** բառերը սովորաբար հանդես են գալիս կողք-կողքի (ի հնդկաց... ի կողմանցն եթովպացւոց, հմմտ. Ա Եզր. Գ 2, Եսթ. Գ 12, Ը 9, ԺԳ 1, ԺԶ 1: Սաղմոսների հայերեն թարգմանության մեջ **եթովպացի** բառը հանդիպում է միայն ՀԹ 1 համարում, այն էլ մյուս բնագրերի **աստրեստանցի** բառի դիմաց, մի բան, որ կարող է պարզապես պատահականության արդյունք լինել:

Վերջապես, անօրինաչափ շեղումների կարգը պետք է դասել նաև բազմաթիվ այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը ավելացնում կամ բաց է թողնում դերանուններ, նախդիրներ և շաղկապներ[44]: Օրինակ, Ա 3 համարում հայը ավելացրել է **նմա** դերանունը. Բ 10-ում **զայս.** Բ 12-ում **նորա.** Է 13-ում **առ նա.** Ը 6-ում **քո.** Թ 9-ում և Թ 17-ում **իւր.** Թ 16-ում և Ժ 3-ում **իւրեանց.** ԺԲ 5-ում **կամ.** ԽԱ 6, 12-ում և ԽԲ 5-ում **արդ.** ԽԴ 2-ում **որպէս.** ԾԴ 3-ում **զի** և այլն: Ե 3, 5 համարներում հայերեն թարգմանությունը, ընդհակառակն, չունի մյուս բնագրերի **զի** շաղկապը. Է 17-ում չիք **նորա.** Թ 5-ում **քո.** Լ 14-ում **յինէն.** ԽԱ 6, 12-ում և ԽԲ 5-ում **իմ** և այլն: Հանախակի են նաև այսպիսի բառերի փոխարինման դեպքերը, ինչպես, օրինակ, Դ 7 համարում հայերեն թարգմանությունը մյուս բնագրերի **իմոց** դերանվան փոխարեն ունի **մերոց.** ԻԱ 12-ում **և** փխ **զի.** ԻԴ 9-ում **քո** փխ **նորա.** ԼԶ 20-ում **անա** փխ **զի.** ԽԳ 9-ում **նորա** փխ **քո.** ԽԴ 15-ում **նմա** փխ **քեզ** և այլն: Պետք է նշել, որ տվյալ խոսքի մասերի նկատմամբ նույն վերաբերմունքը նկատվում է նաև սաղմոսների մյուս բնագրերում: Այդ պատճառով, տարբեր բնագրերի առնչությունները որոշելիս, դերանունների, նախդիրների և շաղկապների համընկնումները չեն կարող վստահելի կռվան հանդիսանալ: Եթե, օրինակ, երկու բնագրում, ի տարբերություն բոլոր մյուսների, կա որևէ այդպիսի բառ, դա դեռևս նրանց կապի ապացույց չէ:

6. ԳՐՉԱԿԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Միայն այն փաստը, որ սաղմոսների հայերեն բնագիրը մեզ է հասել հարյուրավոր ընդօրինակություններով, բավական է ենթադրել տալու, որ այն պարունակում է գրչական բնույթի բազմաթիվ սխալներ: Բարեբախտաբար դրանց մեծ մասը հնարավոր է ուղղել՝ ձեռագրերից հունական նախօրինակի համեմատությամբ ընտրելով նախապատիվ ընթերցվածները: Այնուամենայնիվ այդ աշխատանքի անբասիր իրագործումից հետո էլ հայերեն թարգմանության մեջ կմնան սխալներ, որոնք վկայված լինեն առկա բոլոր ընդօրինակություններում: Զոհրապյանի հրատարակության տողատակի քննությունը ցույց է տալիս, որ հայերեն ձեռագրերի ամենահահախադեպ և բնորոշ տարընթերցվածներն են[45].

[42] Տե՛ս **Հ. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 22:

[43] Նույնը վկայված է նաև Երեմիայի գրքի ԺԳ 23 համարում:

[44] Հատկապես հաճախակի են **զի,** և շաղկապների բացթողումները և հավելումները:

[45] Նշում ենք միայն այն դեպքերը, երբ սկզբնագրին համապատասխանող ընթերցվածները մնացել են Զոհրապյանի հրատարակության տողատակում, իսկ հիմնական բնագրում տեղ են գտել սխալ ձևեր: Այսպիսով, թվարկվող օրինակները ձեռք են բերում նաև բնագրական ճշգրտումների արժեք. ճիշտ ընթերցումները ընդգծված են:

ա) **Անցյալ կատարյալի և II ապառնու շփոթում.** ԺԱ 8 պահեցեր-**պահեսցես**, ապրեցուցեր-**ապրեցուսցես**. ԺԶ 4 **պահեցի**-պահեցից. ԻԶ 8 խնդրեցինք-**խնդրեցից**. Լ 21 ամրացուցեր-**ամրացուսցես**, ծածկեցեր-**ծածկեսցես**. ԼԸ 10 **աւետարանեցի**-աւետարանեցից. Խ 12 **ծանեայ**-ծանեայց. ԿԳ 9 **խոռվեցան**-խոռվեսցին. Հ 16 մտի-**մտից**. ՃԺԸ 16 խօսեցայ-խօսեցայց. ՃԺԸ 26 **պատմեցի**-պատմեցից. ՃԺԸ 44 պահեցի-**պահեցից**. ՃԺԸ 93 ոչ մոռացայ-**ոչ մոռացայց**. ՃԻԳ 1 և ՃԻԹ 1 ասաց-**ասասցէ**. ՃԼԱ 14 բնակեցայ-**բնակեցայց**. ՃԽԹ 2 ուրախ եղև-**ուրախասցի**:

բ) **Բացառականի և ներգոյականի շփոթում.** ԿԷ 18 ի սրբութենէ-ի **սրբութեան**. ԿԷ 30 ի տաճարէ քումմէ-ի տաճարի քում. ՀԲ 25 և ՃԺԸ 87 յերկրէ-**յերկրի**. ԶԳ 7 ի հովտէս-ի **հովիտս**. Ճ 8 ի քաղաքէ-ի քաղաքի. ՃԺԲ 6 յերկնից-**յերկինս**. ՃԻԹ 6 ի պահէ-ի պահու. ՃԽԳ 12 ի մանկութենէ-ի **մանկութեան**. ՃԽԸ 1 ի բարձանց-ի **բարձունս**:

գ) **Պարագայական հայցականի և ներգոյականի շփոթում.** ԻԶ 13 և ՃԺԴ 9 յերկիր-**յերկրին**. ԿԸ 14 ի ճշմարտութիւն-ի **ճշմարտութեան**. ՀԳ 17 **յերկիր**-յերկրի. ՃԺԲ 6 յերկիր-**յերկրի**:

դ) **-ութիւն վերջածանցով գոյականների հոլովների շփոթում.** ԽԴ 8 **ուրախութեան**-ուրախութեամբ. ԽԶ 5 գեղեցկութիւն-գեղեցկութեանցն. ԾԷ 10 բարկութեան-**բարկութեամբ**. ՃԽԴ 12 մեծվայելչութիւն-**մեծվայելչութեան**:

ե) **Բայի II և III դեմքի շփոթում.** Դ 2 լուարլուաւ. Ե 7 առնես-**առնէ**. ՂԳ 1 յայտնեցար-**յայտնեցաւ**. ՃԺԸ 82 **մխիթարեսցես**-մխիթարեսցէ:

զ) **Ներգործաձև և կրավորաձև խոնարհման շփոթում.** ԽԴ 16 ածցեն-**ածցին**. ԶԷ 13 ճանաչիցեն-**ճանաչիցին**:

է) **Գոյականների թվի շփոթում.** ԽԵ 3 ի սիրտ-ի **սիրտս**. ՃԺԸ 2 զվկայութիւն-**զվկայութիւնս**:

ը) **Ո հոլովման եզակի և հոգնակի սեռականների շփոթում.** ԶԸ 4 ընտրելոյ իմոյ-**ընտրելոց իմոց**:

թ) **II ապառնու ներգործաձև և դեմքի և կրավորաձև III դեմքի շփոթում.** ԻԱ 32 պատմեցից-**պատմեսցի**:

Նշված յուրաքանչյուր կարգի համար անհամեմատ ավելի շատ են այն դեպքերը, երբ ձեռագրերը շեղվում են Զոհրապյանի հիմնական բնագրի ճիշտ ընթերցվածներից:

Հասկանալի է, որ այսպիսի տարընթերցվածների առաջացման պատճառը բառերի քերականական ձևերի նմանությունն է: Քննական բնագիր կազմելու ժամանակ սրանց ընտրությունը, ըստ երևույթին, առանձին դժվարություն չի կարող ներկայացնել, եթե միայն նույն տարընթերցվածները չկան նաև հունարեն նախօրինակում: Անելանելի կլինեն միայն այն դեպքերը, երբ հայերեն թարգմանության բոլոր ընդօրինակությունները վերոհիշյալ տարընթերցվածների ձևով միասնաբար շեղվեն Յոթանասնից բնագրից: Որքան թույլ է տալիս դատել Զոհրապյանի հրատարակությունը, նման վիճակները հազվադեպ չեն լինի: Այսպես, Զոհրապյանի բոլոր և մեր ստուգած երկու ձեռագրերը սաղմոսների հետևյալ համարներում հունարեն սկզբնագրի դիմաց ունեն. Գ 8 **փշրեսցես** **փխ** փշրեցեր. Ե 5 բնակեն **փխ** բնակէ. Զ 7 լուացի **փխ** լուացից, թացի **փխ** թացից. Ժ 8 սիրէ **փխ** սիրեաց, տեսանեն **փխ** տեսին. ԺԱ 9 մեծ արասցես **փխ** մեծ արարեր. ԺԳ 6 յամօթ արարին **փխ** յամօթ արարէք. ԺԴ 3, 5 ոչ առնու **փխ** ոչ էառ. ԺԴ 5 ոչ տայ **փխ** ոչ ետ. ԺԷ 22 պահեցից **փխ** պահեցի, ամպարշտեցայց **փխ** ամպարշտեցայ. ԻԴ 8 ուղիղ ես **փխ** ուղիղ է. ԻԴ 9 առաջնորդես **փխ** առաջնորդէ, ուսուցանես **փխ** ուսուցանէ. ԻԵ 4 ոչ նստայց **փխ** ոչ նստեցայ. ԻԶ 3 յուսացայ **փխ** յուսացայց. ԻԶ 6 բարձր արարեր **փխ** բարձր արար, բարձր արա **փխ** բարձր արարեր, շուրջ եղէց **փխ** շուրջ եղէ, մատուցից **փխ** մատուցի. ԻԶ 13 հաւատացի **փխ** հաւատացից (հաւատամ). ԻԹ 12 դարձոյց **փխ** դարձուցեր, զերծ **փխ** զերծեր, զգեցոյց **փխ** զգեցուցեր. Լ 4 առաջնորդեցեր **փխ** առաջնորդեսցես, սնուցեր **փխ** սնուսցես. ԼԱ 5 ցուցից **փխ** ցուցի, ոչ ծածկեցից **փխ** ոչ ծածկեցի, թողցես **փխ** թողեր. ԼԱ 7 եղեն **փխ** եղև. ԼԸ 9 փրկեցեր **փխ** փրկեա. Խ 4 դարձուցանէ **փխ** դարձուցեր. ԽԱ 6 խոստովանեա **փխ** խոստովան եղէց. ԽԵ 10 եհար **փխ** հարցէ, փշրեաց **փխ** փշրեսցէ, խորտակեաց **փխ** խորտակեսցէ, այրեաց **փխ** այրեսցէ. ԽԸ 10 վաստակեա **փխ** վաստակեաց, կեցցես **փխ** կեցցէ, ոչ տեսցես **փխ** ոչ տեսցէ, տեսցես **փխ** տեսցէ. ԽԹ 5 ժողովել **փխ** ժողովեցէք. Ծ 18 մատուցանեաք **փխ** մատուցանէի և այլն[46]: Սահմանափակելով օրինակների թվարկումը, պետք է նշել՝ բացառված չէ, որ հետագայում կարող է պարզվել, որ նրանցից շատերի կողքին ձեռագրերում պահպանվել են ճիշտ ընթերցվածներ:

Եթե, ինչպես ասվեց, այսպիսի շեղումների պատճառը քերականական ձևերի նմանությունն է, ապա նրանց բնագրական արդարացումը պետք է փնտրել մեծ մասամբ շրջապատի՝ նախորդ կամ հաջորդ նախադասության ազդեցության մեջ: Այսպես, օրինակ, Զ 7 համարում հայը ունի **լուացի** և **թացի** հույնի **լուացից** և **թացից** բառերի փոխարեն, նախորդ նախադասության **վաստակեցի** բառի ազդեցությամբ. «**Վաստակեցի** ես ի հեծութեան իմում, **լուացի** զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ **թացի**»: Կամ ԺԷ 22 համարում Յոթանասնից բնագրի **պահեցի** և **ամպարշտեցայ** բառերը հայերեն թարգմանության մեջ դարձել են **պահեցից** և **ամպարշտեցայց**, որովհետև ԺԷ 21 համարում երկու անգամ գործածված է II ապառնի ժամանակը. «ԺԷ 21. **Հատուսցէ** ինձ Տէր ըստ արդարութեան իմում, ըստ անբծութեան իմում **հատուսցէ** ինձ: ԺԷ 22. Ես **պահեցից** զճանապարհս Տեառն, և ոչ **ամպարշտեցայց** յԱստուծոյ իմմէ»: Իսկ ԼԸ 9 համարում

---

[46] Սրանց պետք է գումարել նաև այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը մյուս բնագրերից տարբերվում է գոյականների թվով, ինչպես, Ե 5 չարք **փխ** չար. ԺԶ 10 բերանք **փխ** բերան. ԻԳ 2 ծովու **փխ** ծովուց. Լ 17 ծառայս **փխ** ծառայ. Լ 25 սիրտք **փխ** սիրտ. ԼԱ 9 զձիս և զջորիս **փխ** զձի և զջորի. ԼԲ 4 պատգամք **փխ** պատգամ. ԼԳ 19 սրտիք **փխ** սրտիս և այլն:

հայերեն թարգմանությունն ունի **փրկեցեր** փխ **փրկեա,** հաջորդ նախադասությունն **արարեր** բառի ազդեցությամբ. «Ցամենայն անօրէնութենէ իմմէ **փրկեցեր** զիս, նախատինս անզգամաց **արարեր** զիս»: Հմմտ. նաև ԻԳ 7, 9, ԻԴ 9, ԻԵ 4, ԻԹ 12, ԽԱ 6, ԽԵ 10, ԽԹ 5 և այլն:

Դժվարությունն այն է, որ անհնար է պարզել, թե ում են պատկանում նշված կարգի շեղումները՝ թարգմանչին, թե՞ գրիչներին: Բացի այդ, միշտ չէ, որ անպայման նախնական պետք է համարել սկզբնագրին համապատասխանող ձևերը: Իրավացի է Կ. Տեր-Մկրտչյանը, երբ ի նկատի ունենալով Աստվածաշնչի քննական բնագրի պատրաստման իր ձեռնարկումը, գրում է. «Իմաստը ճշտելու համար մենք նախապատուություն տալիս ենք այն ընթերցուածներին, որոնք բնագրին աւելի մօտ են՝ չանելով ի հարկէ ոչ մի սրբագրութիւն, նոյնիսկ ակներև սխալների համար, եթէ գոնէ մի ձեռագրի վկայութիւնը չունենանք: Նախկին հրատարակութիւնների մի կարևոր թերութիւնը հէնց այն է, որ բնագիրն ի նկատի չունենալով և միայն յունարէնի հետ համեմատելով՝ շատ անգամ ընտրել են այնպիսի ընթերցուածներ, որ յունարէնին աւելի մօտ են, բայց նախնականը չեն, այլ ձեռագիրների մէջ սրբագրուած՝ յունարէն իմացողների ձեռքով»[47]: Սակայն «նոյնիսկ ակներև սխալների համար» «ոչ մի սրբագրութիւն» չանելը «եթէ գոնէ մի ձեռագրի վկայութիւնը» չկա, ըստ երևույթին, պետք է համարել ծայրահեղ զգուշավորություն: Երբ տվյալ հատվածի բովանդակությունը, բառերի գրության առանձնահատկությունները և մյուս բնագրերի տվյալները ակնհայտ են դարձնում, որ առկա է գրչական սխալ, ապա այն, իհարկե պատշաճ հիմնավորմամբ, պետք է ուղղել, թեկուզ առանց ձեռագրական հիմքերի: Այսպես.

ԾԸ 17. Եւ օրհնեցից **զօրհնութիւնս** Տեառն. ցնծացայց առաւօտուց յողորմութեան քում:

Հունարենը և բոլոր մյուս բնագրերը ունեն՝ ἐγὼ δὲ ᾄσομαί σου: Պարզ է, որ **զօրհնութիւնս** ընթերցվածը գրչական սխալի արդյունք է և առաջացել է **զօրութիւնս** բառից: Որ ὑμνῶ-ը թարգմանիչը **օրհնութիւն** չէր թարգմանի, կարող են վկայել Աստվածաշնչում այդ բառի օգտագործման բազմաթիվ դեպքերը: Ուստի, եթե նույնիսկ ոչ մի ձեռագրում չգտնվի **զօրութիւնս** ընթերցվածը, միևնույն է, այն պետք է նախնական համարել[48]: Առայժմ այս ուղղությամբ կատարված մեր ստուգումները ցույց են տվել, որ Մաշտոցյան Մատենադարանի հնագույն աստվածաշնչյան ձեռագրերը (142, 177, 179, 180, 195, 199, 287, 345, 1500, 5560, 6473) ինչպես այստեղ, այնպես նաև ստորև քննվող ԾԹ 2, Հ 6, ՃԺԷ 14 և ՃԼԲ 3 համարներում համաձայն են Զոհրապյանի հրատարակության տվյալներին:

ԾԹ 2. Եւ ի դարձին հարկանէր Ցովաբ զնորն **աղտից** յերկոտասան հազարս:

Ցոթանասնից բնագիրը ընդգծված բառի փոխարեն ունի ἀλῶν: Սա ցույց է տալիս, որ գրիչների ստուգաբանությամբ **աղտից** է դարձել հայերեն **աղից** բառը[49]:

Հ 6. Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ յորովայնէ մօր իմոյ, դու ես ապաւէն իմ և առ ի քէն է **օգնութիւն** իմ յամենայն ժամ:

Ընդգծված բառի փոխարեն մյուս բնագրերը ունեն **օրհնութիւն** (=ὑμνητός), միայն հունարեն երկու ձեռագրում կա ὑπομονή «յիշատակ, յուշ», իսկ մի ձեռագրում՝ ὑπομονή «համբերութիւն» ընթերցվածը: Ինչպես տեսնում ենք, սրանցից ոչ մեկն էլ չէր կարող **օգնութիւն** թարգմանվել: Մնում է միայն ենթադրել, որ սկզբնական **օրհնութիւն** ընթերցվածն է հետագայում նմանության պատճառով դարձել **օգնութիւն**[50]: Ընդ որում, նույն բանը կատարվել է նաև ՃԺԷ 14 համարում, որտեղ նույնպես մյուս բնագրերի **օրհնութիւն** բառի փոխարեն հայերեն ձեռագրերը պահպանել են **օգնութիւն** սխալ ընթերցվածը. «Զօրութիւն իմ և **օգնութիւն** իմ Տէր, և եղև ինձ ի փրկութիւն»: Հետաքրքիր է, որ **օրհնութիւն/օգնութիւն** բառերի գրչական շփոթման հնարավորությունը հավաստում է հենց սաղմոսների հայերեն թարգմանության տվյալներով. ԻԳ 5 համարում որոշ ձեռագրեր **զօրհնութիւն** ճիշտ ընթերցվածի փոխարեն ունեն **զօգնութիւն:** Այս առումով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ **օրհնել/աւրհնել** բառը հաճախ ձեռագրերում հապավվում է **աւհնել, աւհնութիւն, աւհնեցից** ձևով[51]:

ՃԼԲ 3. Որպէս ցօղ զի ցօղէ ի Հերմոնէ ի վերայ լերին Սիովնի. անդ **պատրաստեաց** Տէր զօրհնութիւն, և զկեանսն յաւիտենից:

Անմիջապես կարելի է նկատել, որ հայերեն թարգմանության ընդգծված բառը չի ներդաշնակում տվյալ նախադասության բովանդակությանը. ճի՞շտ է, որ «ի վերայ լերին Սիովնի... պատրաստեաց Տէր... զկեանսն յաւիտենից»: Հակասությունը հասկանալի է դառնում, երբ դիմում ենք մյուս բնագրերին, որոնք **պատրաստեաց** բառի դիմաց ունեն **պատուիրեաց** (=ἐνετείλατο): ՊԱՏՈՒԻՐԵԱՑ-ՊԱՏՐԱՍՏԵԱՑ շփոթությունը հնարավոր է, ըստ երևույթին, բոլորգիր երկաթագրում, մի հանգամանք, որ խոսում է տարընթերցվածի հնության մասին: Իսկ ինչ վերաբերում է **պատուիրեաց** բառի հարազատությանը, ապա կարելի

---

[47] **Կ. Տեր-Մկրտչյան,** նշվ. աշխ., էջ 1087:

[48] Այս համարում **զօրութիւնս** ուղղումը առաջարկել է դեռևս Մ. Զամչյանը (նշվ. աշխ., հ. Ժ, էջ 281):

[49] Սա նույնպես ուղղված է Մ. Զամչյանի մոտ (նշվ. աշխ., հ. Ե, էջ 99):

[50] Այս համարում **օգնութիւն** ընթերցվածի սխալ լինելը նշել է դեռևս **Ե. Դուրյանը.** տե՛ս նշվ. աշխ., էջ 229—230:

[51] Հմմտ. Մատենադարան, ձեռ. 1500, Սաղմ. ԾԸ 17, ՃԼԲ 3 և այլն: Հ 6 և ՃԺԷ 14 համարներում **օրհնութիւն** նախնական ընթերցվածի հավանականությունը նշել է դեռևս Մ. Զամչյանը (նշվ. աշխ., հ. Ժ, էջ 337, 518):

է համեմատել ԽԱ 9 համարը. «Ի տուէ **պատուիրեաց** Տէր զողորմութիւն իւր, գիշերի զօրհնութիւն նոր»:

Լուրջ հիմնավորում է պահանջում նաև այն ընթերցվածների ընտրությունը, երբ տարընթերցվածը նույնքան, և գուցե ավելի լավ է հարմարվում տվյալ հատվածի բովանդակությանը: Օրինակ, ԿԳ 7 համարում Զոհրապյանի օգտագործած բոլոր ձեռագրերը ունեն **«պատրաստեցան** ի քննել զքննութիւն», մի նախադասություն, որ առերևույթ աղավաղում չի ցուցաբերում: Սակայն ձեռագրական տվյալներով պարզվում է, որ **պատրաստեցան** բառի փոխարեն պետք է լինի **պարտասեցան** (ἐξέλιπον)[52]: ԽԳ 13 համարի «Շրջեցարուք զՍիոնի, պաշարեցէք զնա, և **պատեցէք զաշտարակս նորա»** նախադասության ընդգծված բառերի փոխարեն Զ ոմանք տալիս են՝ **«պատմեցէք** յաշտարակս նորա»: Որքան էլ տարօրինակ թվա, համեմատությունը ցույց է տալիս, որ ճիշտը սա է. Յոթանասնիցը ունի՝ διηγήσασθε ἐν τοῖς πύργοις, αὐτῆς, որ եբրայական բնագրում նշանակում է՝ «հաշվեցեք նրա աշտարակները»[53]: Սաղմոս ԿԵ 9-ում՝ «Այն որ **ետ** զանձն իմ ի կեանս և ոչ ետ դողութիւն ոտից իմոց», Զ ոմանք մյուս բնագրերի նման առաջին **ետ**-ի փոխարեն ունեն **եդ,** որը անշուշտ պետք է բարձրացնել հիմնական բնագիր (=τοῦ θεμένου τὴν ψυχήν μου εἰς ζωὴν...) [54]: Տարընթերցվածների իմաստավորման առումով հետաքրքիր է ԿԷ 26 համարը. «Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն, ի մէջ **գուսանաց** և գովչաց»: Թվում է, թե **գուսանաց** բառը ավելի քան պատշաճում է այս նախադասությանը, սակայն հաշվի առնելով հունարեն նախօրինակը, ճիշտ պետք է համարել Զոհրապյանի հրատարակության մյուս ձեռագրերի **կուսանաց** (=νεανίδων) ընթերցվածը[55]: Գրչական սխալի ուշագրավ նմուշ է մատուցում ՄԻԶ 3 համարի «ժառանգութիւն **առն** որդիք են» նախադասությունը: Զոհրապյանի օգտագործած մի ձեռագիր և Աստվածաշնչի 1895 թ. հրատարակությունը ընդգծված բառի փոխարեն ունեն **տեառն** (=κυρίου) ճիշտ ընթերցվածը[56]: **Առն** տարբերակը առաջացել է, ըստ երևույթին, որևէ նախագաղափար օրինակի **տե-առն** տողադարձի պատճառով, երբ նախորդ տողում մնացած **տե** տառախումբը չի նկատվել:

Բնագրական քննության կարևոր խնդիրներից է գրչական և թարգմանական սխալների տարբերակումը: Եթե առաջինները արդյունք են մեծ մասամբ պատահականությունների, ապա թարգմանական սխալները հանդես են գալիս սովորաբար սկզբնագրի այլօրինակ մեկնաբանման, որոշ բառերի բազմիմաստության կամ համանմանության պատճառով: Այսպիսի սխալները սաղմոսների հայերեն թարգմանության մեջ մեծ թիվ չեն կազմում, մի բան, որ բացատրվում է ինչպես թարգմանիչների հմտությամբ այնպես նաև բնագրի պարզությամբ: Այնուամենայնիվ այս, թեկուզ փոքրաթիվ, սխալների վերհանումն էլ կարևոր նշանակություն ունի թարգմանության բնութագրման համար: Սաղմոսների հայերեն բնագրի թարգմանական սխալներից մի քանիսի մասին մանրամասն խոսվել է սույն աշխատության «Նախօրինակի հարցը» դրվագում: Այստեղ կարելի է բավարարվել ևս մի քանի ցցուն օրինակների թվարկումով: Այսպես.

Զ 6. Զի ոչ ոք է, որ ի մահու յիշէ զքեզ, **կամ ի դժոխս խոստովան առնի առ քեզ:**

Մյուս բնագրերում ընդգծված նախադասությունը հարցական է՝ ἐν δὲ τῷ ᾅδῃ τίς ἐξομολογήσεταί σοι (=կամ ի դժոխս ո՞ խոստովան առնի առ քեզ): Ամենայն հավանականությամբ, հայ թարգմանիչը շփոթել է հունարեն τίς «ո՞» հարցական և τίς «ոք» անորոշ դերանունները[57]: Նույն շփոթությունը տեղ է գտել նաև ԾԴ 7 համարում, որտեղ Յոթանասնից և մյուս բնագրերի καὶ εἶπα Τίς δώσει μοι πτέρυγας ὡσεὶ περιστερᾶς (=Ասէի ո՞ տայր ինձ թևս որպէս զաղաւնոյ) նախադասության փոխարեն հայերեն թարգմանությունը ունի՝ «Ասէի տայր **ոք...»:**

Է 16. Գուբն **զոր** փորեաց և պեղեաց, **ի նոյն** անկցի ի խորխորատ զոր և գործեաց:

Սաղմոսների հունարեն թարգմանությունը և մյուս բնագրերը սրա փոխարեն ունեն՝ λάκκον ὤρυξεν καὶ ἀνέσκαψεν αὐτόν καὶ ἐμπεσεῖται εἰς βόθρον, ὃ εἰργάσατο (Գուբ փորեաց և պեղեաց զնա, և անկցի ի խորխորատ զոր գործեաց): Թարգմանիչն, ըստ երևույթին, **ի նոյն** է կարդացել հունարեն բնագրի αὐτόν (զնա) դերանունը, այն վերագրելով βόθρον (խորխորատ) բառին: Դրան նպաստել է նախ այն հանգամանքը, որ դերանունը ունի նաև այդ իմաստը, ապա այն, որ և՛ αὐτόν և՛ βόθρον բառերը դրված են հայցական հոլովով: Այս թյուրիմացությունից էլ առաջացել է

---

[52] Տե՛ս **Մ. Չամչյան,** նշվ. աշխ., հ. Ժ, էջ 296. նաև՝ **Հ. Անասյան,** Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 87: Ընդ որում, Աստվածաշնչի 1860 և 1895 թթ. հրատարակությունների մեջ արդեն ուղղված է՝ **պարտասեցան:**

[53] **Պատմեցէք** ընթերցվածի նախապատվությունը նշել է **Ե. Դուրյանը.** տե՛ս նշվ. աշխ., էջ 229:

[54] **Եդ** և **ետ** բառերի շփոթման այս փաստը ուշադրություն է հրավիրում ևս մի հատվածի վրա: Զոհրապյանի օգտագործած և մեր ստուգած 11 ձեռագրերը ԾԴ 27 համարում ունեն. **«Ետ** նոցա զբան նշանաց իւրոց և զարուեստս իւր յերկիր Քամայ»: Բացառված չէ, որ այստեղ էլ սկզբում եղել է **եդ,** քանի որ Յոթանասնիցը տալիս է ἔθετο (=եդ):

[55] Հմմտ. **Մ. Չամչյան,** նշվ. աշխ., հ. Ե, էջ 38:

[56] 1860 թ. հրատարակությունը ունի՝ **առն:** Ուղղված է նաև Չամչյանի մոտ (նշվ. աշխ., հ. Ժ, էջ 560):

[57] Ոսկանյան հրատարակությունը և նրա հիմք ձեռագիրը (Մատենադարան, № 180) այդպես էլ ունեն՝ «կամ ի դժոխս **ոք** խոստովան առնի առ քեզ»:

երկրորդ շեղումը՝ **գուրն զոր փորեաց** փխ **գուբ փորեաց:**

Խե 5—6. Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր բարձրեալն: Աստուած ի մէջ **նոցա** և **նոքա մի սասանեսցին,** օգնեսցէ **նոցա** Աստուած...:

Յոթանասնիցում և սաղմոսների մյուս բնագրերում ընդգծված բառերի դիմաց համապատասխանաբար դրված են՝ **նորա** (αὐτῆς), **մի սասանեսցի** (οὐ σαλευθήσεται) և **նմա** (αὐτῇ): Սրանից և իգական սեռի համաձայնությունից երևում է, որ նշված բոլոր բառերը վերաբերում են **քաղաք** (πόλις) և ոչ թե չեզոք սեռի **յարկ** (σκήνωμα) բառին: Սակայն հայը σκήνωμα-ն թարգմանելով հոգնակի թվով **զյարկս** և սրան էլ վերագրելով հաջորդ բոլոր բառերը, հոգնակի է դարձրել նաև վերջիններս: Բառերի համաձայնության սխալ ըմբռնման նույնպիսի մի օրինակ էլ գտնում ենք ԽԷ 3—4 համարում. «Հաստարմատ ցնծասցէ ցնծութեամբ ամենայն երկիր. լերինք Սիոնի կողմանք հիւսուսոյ՝ քաղաք թագաւորի մեծի: Աստուած ի տաճարի **իւրում** յայտնի, ի ժամանակի որպէս օգնական լինէր **նոցա»:** Այստեղ չի նկատվել, որ ընդգծված բառերի փոխարեն հունարեն թարգմանության մեջ դրված αὐτῆς բառը երկու դեպքում էլ վերաբերում է **քաղաքին,** այսինքն, անհրաժեշտ էր թարգմանել՝ «Աստուած ի տաճարի **նորա** յայտնի, ի ժամանակի որպէս օգնական լինէր **նմա»:** Եվ վերջապես, նույն սխալը կրկնված է նաև ԾԴ 10—12 համարներում. «Ընկալո Տէր և բաժանեա զլեզուս նոցա, զի տեսի զանօրէնութիւն և զհակառակութիւն ի քաղաքի: Ի տուէ և ի գիշերի շուրջ եղեն զպարսպօք նորա անօրէնութիւն, չարիք և մեղք են ի մէջ **նոցա** (փխ **նորա**— αὐτῆς): Եւ ոչ պակասեաց ի հրապարակս **նոցա** (փխ **նորա**— αὐτῆς) վաշխ և նենգութիւն»:

ԽՋ 10. Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Աստուած Աբրահամու, **զի Աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան** (... ὅτι τοῦ θεοῦ οἱ κραταιοὶ τῆς γῆς σφόδρα ἐπήρθησαν):

Հայ թարգմանիչը յուրովի է մեկնաբանել այս նախադասությունը, օգտվելով այն հանգամանքից, որ հունարենի անվանական նախադասություններում ստորոգումը կարող է բացակայել և սեռական հոլովը երբեմն առանց նախդրի էլ կարող է ունենալ բացառական իմաստ: Ճիշտ է՝ «...զի Աստուծոյ են զօրութիւնք երկրի, յոյժ համբարձան»:

ԾԴ 38. Ուրախ եղև Եգիպտոս ընդ ելանել նոցա զի անկաւ առ **Տեառն** ի վերայ նոցա:

Հայերեն թարգմանության ընդգծված բառը դրված է Յոթանասնից և մյուս բնագրերի **նոցա** (αὐτῶν) դերանվան փոխարեն: Ըստ երևույթին, չի հասկացվել, որ **առ**-ը վերաբերում է Եգիպտոսից ելնողներին (հրեաներին): Սակայն եթե նույնիսկ հայերեն թարգմանության մեջ **Տեառն** բառի փոխարեն **նոցա** դրված լիներ, միևնույն է նախադասության իմաստը դեռևս չէր պարզվի, քանի որ անհաջող է թարգմանված նաև **անկաւ** ստորոգյալը: Հունարեն բնագրի ἐπέπεσεν բառը անհրաժեշտ էր թարգմանել անցյալ վաղակատար ժամանակով՝ «...զի **անկեալ էր** առ նոցա ի վերայ նոցա»:

Տեսողական սխալի հետևանք է, ըստ երևույթին, հայերեն թարգմանության շեղումը մյուս բնագրերից ԺԱ 7 համարում. «Բանք Տեառն բանք սուրբ են, որպէս և արծաթ ընտրեալ և փորձեալ **յերկրէ,** սրբեալ և պարզեալ եւթնպատիկ **ի հողոյ»:** Մյուսները չունեն վերջին **ի հողոյ** բառը (=... ἀργύριον πεπυρωμένον δοκίμιον τῇ γῇ, κεκαθαρισμένον ἑπταπλασίως): Մինչև ստորակետը ճիշտ վերարտադրելով, հայը նույն τῇ γῇ-ն, որը δοκίμιον (փորձեալ) բառի լրացումն է, վերագրել է նաև հաջորդ κεκαθαρισμένον (սրբեալ և պարզեալ) բառին, և թարգմանել երկու անգամ՝ **յերկրէ** և **ի հողոյ**[58]:

Սկզբնագրի յուրովի ընկալման հետաքրքիր դեպքեր են սաղմոսների հայերեն թարգմանության հետևյալ հատվածները. ԻԳ 4 «որ ոչ առ զնանրութիւն յանձն իւր» **փխ** «որ ոչ առ ի նանրութիւն (կամ՝ նանրութեամբ) զանձն իւր» (... ἐπὶ ματαίῳ τὴν ψυχὴν αὐτοῦ): Լ 11 «աղբատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ» **փխ** «տկարացաւ յաղքատութեան զօրութիւն իմ» (ἠσθένησεν ἐν πτωχείᾳ ἡ ἰσχύς μου): ԼԱ 6 «ի ջուրցն հեղեղաց բազմաց» **փխ** «ի հեղեղս ջուրց բազմաց» (ἐν κατακλυσμῷ ὑδάτων πολλῶν): ԼԲ 7 «ղնէ ի խորս զգանձս իւր» **փխ** «ղնէ ի զանձս գլխորս» (τιθεὶς ἐν θησαυροῖς ἀβύσσους): ՃԺԷ 12 «վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր» **փխ** «...որպէս հուր ի փուշս» (ὡσεὶ πῦρ ἐν ἀκάνθαις): ՃԻ 5 «և Տէր ընկալցի աջով ձեռամբ իւրով» **փխ** «Տէր հովանի քո յաջոյ ձեռին քո» (κύριος σκέπη σου ἐπὶ χειρὸς δεξιᾶς σου): ՃԼԸ 24 «և տես թէ իցեն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ» **փխ**«...իցեն յիս ճանապարհք անօրէնութեան» (εἰ ὁδὸς ἀνομίας ἐν ἐμοί): Պետք է նկատել, որ այս շեղումները նման չեն նախորդ դրվագում նկարագրված բառերի դասավորության պարզ խախտումներին, քանի որ ամբողջությամբ փոխում են նախադասության միտքը:

(Շարունակելի)

---

[58] **Ի հողոյ**-ն **յերկրէ** բառի կրկնությունն է համարում նաև Մ. Չամչյանը (նշվ. աշխ., հ. Ժ, էջ 51):